

Հաստատված է  
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի  
խորհրդի 25.05.20թ. որոշմամբ  
Թիվ 115 արձանագրություն

Ներքին աուդիտի եզրակացությունը  
բանկի ներքին հսկողության իրականացման նվազագույն  
պայմաններին համապատասխանության վերաբերյալ

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի ներքին աուդիտի բաժինը բանկի խորհրդի կողմից հաստատված 2019թ. տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն իրականացրել է տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև բանկում իրականացվող գործընթացների վերստուգումներ: Իրականացվել է նաև հետստուգումային հսկողություն բանկի ստորաբաժանումների կողմից այն միջոցառումների իրականացման նկատմամբ, որոնք առաջարկվել են արտաքին աուդիտի կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված ստուգման արդյունքում: Այդ աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել է նաև բանկում ներքին հսկողության համակարգի համապատասխանությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պայմաններին: Վերստուգումները և դրանց շրջանակներում ընդգրկվող թեմաների ընտրանքը կատարվել է այնպես, որպեսզի բավարար հիմքեր ձևավորվեն արժանահավատ եզրակացության համար:

Կատարված վերստուգումների ընթացքում ուսումնասիրվել են բանկի ներքին իրավական ակտերը, դրանց համապատասխանությունը գործող պահանջներին, ինչպես նաև իրականացվող գործառնությունների համապատասխանությունը այդ ակտերի դրույթներին: Նշված գործընթացի արդյունքում արձանագրվել են նաև որոշակի ռիսկեր, խնդիրներ և թերություններ, որոնց լուծումներ տալու և/կամ նվազեցնելու նպատակով դրանք քննարկվել են բանկի շահագրգիռ ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների հետ, ապա ներկայացվել են բանկում գործող հանձնաժողովների և բանկի խորհրդի նիստերի ընթացքում, որի արդյունքում տրվել են համապատասխան հանձնարարականներ: Հանձնարարականների կատարման ընթացքը ևս մշտապես գտնվել է Ներքին աուդիտի ուշադրության կենտրոնում:

Հիմք ընդունելով կատարված վերստուգումների և հետստուգումների արդյունքները, մեր կարծիքով բանկի ներքին հսկողության համակարգը՝ 2019թ. ընթացքում ընդհանուր առմամբ բավարարել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ»-ի պահանջներին:

Ներքին աուդիտի բաժնի պետ



Ա. Վարժապետյան  
25.05.2020թ.